

ՀՀ Շիրակի մարզում անցկացվելիք «Մինասի գույներով» երիտասարդ նկարիչների միջազգային 9-րդ պլեներ» մշակութային միջոցառման նկարագիր

«Մինասի գույներով» երիտասարդ նկարիչների միջազգային 9-րդ պլեներին մասնակցելու համար ՀՀ յուրաքանչյուր մարզպետարան, ինչպես նաև Երևանի քաղաքապետարանը կներկայացնի 3 նկարիչ-մասնակցի /ներառյալ ջոկատի ղեկավարը/ հայտ:

Մասնակիցների տարիքը չպետք է գերազանցի 30 տարեկանը:

Վայրը՝ ՀՀ Շիրակի մարզ

Անցկացման ժամանակահատվածը՝ 2020թ. նոյեմբերի 10-22-ը ընկած ժամանակահատվածում /3 օր տևողությամբ/

Մարզերից Պլեների մասնակցության հայտերի ներկայացման վերջնաժամկետը՝

30-ը հոկտեմբերի, 2020 թվականի

Ծրագրի մասնակիցները և գործնական տեղեկատվություն

Ծրագրին կմասնակցեն 18-30 տարեկան թվով 45 նկարիչներ ՀՀ ողջ տարածքից և ԼՂՀ-ից: Ծրագրի 45 մասնակցի համար կազմակերպիչ կողմը կապահովի 3-օրյա կեցություն և օրական 3-անգամյա սնունդ, էքսկուրսիոն ծախսերը, լոկալ տրանսպորտը, անվճար վարպետության դասեր, մարզական, մշակութային և ժամանցային միջոցառումներ: Մասնակիցների համար մարզկենտրոն Գյումրիից մինչև միջոցառման անցկացման վայր ճանապարհածախսը հոգում է կազմակերպիչ կողմը: Մասնակիցները պետք է իրենց հետ ունենան նաև անհրաժեշտ նկարչական պարագաներ:

Այս տարվա պլեներին նախորդ տարիների մասնակիցներից կարող է մասնակցել միայն մեկը /միայն երկրորդ անգամ, երրորդ անգամ չի թույլատրվում/ ջոկատի ղեկավարի կարգավիճակով: Մյուս երկու մասնակիցները պետք է մասնակցած չլինեն «Մինասի գույներով» երիտասարդ նկարիչների միջազգային պլեներներներից ոչ մեկին: Ցանկալի է, որ նկարչությունից բացի նկարիչները ունենան վառ ունակություններ նաև մարզամշակութային այլ ոլորտներում՝ ազատ ժամանցն առավել հետաքրքիր կազմակերպելու համար, իրենց հետ ունենան երաժշտական գործիքներ /կիթառ, սկորդեոն և այլ/ և հավելյալ ժամանցային խաղեր:

Մասնակիցներին կներկայացնեն Երևանի քաղաքապետարանը և ՀՀ մարզպետարանները՝ յուրաքանչյուր պատվիրակության մեջ ընդգրկելով 3-ական ներկայացուցիչ /1-ը ջոկատի ղեկավարի կարգավիճակով/:

ՀՀ մարզերում և մայրաքաղաք Երևանում կանցկացվեն նախընտրական փուլեր, որոնց արդյունքում լավագույնը ճանաչված երիտասարդ նկարիչները հնարավորություն կստանան մասնակցելու «Մինասի գույներով» երիտասարդ նկարիչների միջազգային 9-րդ պլեներին:

Ծրագրի պատմություն և հակիրճ նկարագրություն

2012 թվականի օգոստոսի 28-31-ը ՀՀ Շիրակի մարզպետարանի կողմից ՀՀ Շիրակի մարզի «Մանուշակ» ճամբարում կազմակերպվեց և անցկացվեց «Մինասի գույներով» երիտասարդ նկարիչների հանրապետական առաջին պլեները, որին մասնակցեցին երիտասարդ նկարիչների պատվիրակություններ՝ ՀՀ բոլոր մարզերից, մայրաքաղաք

Երևանից, ինչպես նաև վաստակավոր նկարիչներ՝ ՌԴ Ուլյանովսկի մարզից, ովքեր, հայ արվեստագետների կողքին անցկացրեցին վարպետաց դասեր: Ծրագիրն առաջինն էր ՀՀ-ում աշխարհագրությամբ և ծավալով, և արձագանքն այնքան մեծ էր, որ կարիք առաջացավ այն դարձնելու ամենամյա միջազգային՝ տարեցտարի մեծացնելով մասնակից պատվիրակությունների թիվը:

2013 թվականի օգոստոսի 25-30-ը «Մինասի գույներով» երիտասարդ նկարիչների միջազգային 2-րդ պլեները հյուրընկալեց երիտասարդ նկարիչների պատվիրակություններ ՀՀ ողջ տարածքից, ԼՂՀ-ից, Վրաստանի Հանրապետության մայրաքաղաք Թբիլիսիից և Ջավախք շրջանից, ՌԴ մայրաքաղաք Մոսկվայից, Ուդմուրտիայի Հանրապետությունից: Այն նվիրվեց Մինաս Ավետիսյանի ծննդյան 85-ամյակին: Մասնակիցների թիվը հասավ 55-ի, օրերի տևողությունը՝ 6-ի:

2014 թվականի օգոստոսի 25-30-ը ՀՀ Շիրակի մարզի Թորոսգյուղ համայնքին կից գտնվող «Երեքնուկ» հանգստի գոտու տարածքում ՀՀ Շիրակի մարզպետարանը և «Արվեստը հանուն խաղաղության» հասարակական կազմակերպությունն անցկացրեցին «Մինասի գույներով» երիտասարդ նկարիչների միջազգային 3-րդ պլեները: Մասնակիցների թիվը հասավ 60-ի: Ծրագիրն մասնակցեցին 18-30 տարեկան երիտասարդ նկարիչներ Հայաստանի Հանրապետությունից, ԼՂՀ-ից, Սփյուռքից, ԱՊՀ անդամ պետություններից, Եվրոպայից:

2015 թվականի օգոստոսի 27-30-ը անցկացվեց «Մինասի գույներով» երիտասարդ նկարիչների միջազգային 4-րդ պլեները: Այն նվիրվեց Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին՝ կրելով «Վերածնված Հայաստանի արվեստագետները» խորագիրը: Միջոցառումն իր մեջ ներառեց նաև երկու այլ խորհուրդ՝ նվիրվելով հայ մեծանուն գեղանկարիչ Մարտիրոս Սարյանի ծննդյան 135-ամյակին և ծնունդով շիրակցի գեղանկարիչ Մինաս Ավետիսյանի մահվան 40-րդ տարելիցին: Պլեները համախմբեց 50 երիտասարդ արվեստագետներ՝ ՀՀ ողջ տարածքից, ԼՂՀ-ից, Վրաստանի Հանրապետության Ջավախք շրջանից և Սփյուռքից:

2016 թվականի օգոստոսի 28-31-ը Թորոսգյուղի «Աղաջանյան» ճամբարում անցկացված «Մինասի գույներով» երիտասարդ նկարիչների միջազգային 5-րդ պլեները նվիրվեց Հայաստանի Հանրապետության Անկախության 25-ամյակին և ունեցավ «Անկախ Հայաստանի երիտասարդ արվեստագետները» խորագիրը: Պլեները համախմբեց 55 երիտասարդ արվեստագետների՝ ՀՀ ողջ տարածքից, ԼՂՀ-ից և Վրաստանի Հանրապետության Ջավախք շրջանից:

2017 թվականի օգոստոսի 22-25-ը ՀՀ Շիրակի մարզի Գյումրի քաղաքի «Գարուն» հանգստի գոտու տարածքում անցկացված «Մինասի գույներով» երիտասարդ նկարիչների միջազգային 6-րդ պլեները նվիրվեց հայ մեծանուն ծովանկարիչ Հովհաննես Այվազովսկու ծննդյան 200-ամյակին: Պլեներին մասնակցեցին 45 երիտասարդ արվեստագետներ՝ ՀՀ ողջ տարածքից և ԼՂՀ-ից:

2018 թվականի օգոստոսի 28-31-ը ՀՀ Շիրակի մարզի «Աղաջանյան» ճամբարում անցկացվեց «Մինասի գույներով» երիտասարդ նկարիչների միջազգային 7-րդ պլեները: Այն նվիրվեց մեծանուն հայ նկարիչ Մինաս Ավետիսյանի ծննդյան 90-ամյակին և Հայաստանի Առաջին Հանրապետության և մայիսյան հերոսամարտերի 100-ամյակին և ունենցավ «Անկախ Հայաստանի երիտասարդ արվեստագետները» խորագիրը: Պլեները համախմբեց 18-30 տարեկան 45 երիտասարդ արվեստագետների՝ ՀՀ ողջ տարածքից, ԼՂՀ-ից, Վրաստանի Հանրապետության Ջավախք շրջանից:

2019 թվականի օգոստոսի 19-22-ը ՀՀ Շիրակի մարզի «Աղաջանյան» ճամբարում անցկացվեց «Մինասի գույներով» երիտասարդ նկարիչների միջազգային 8-րդ պլեները: Այն նվիրվեց ամենայն Հայոց բանաստեղծ Հովհաննես Թումանյանի և Կոմիտաս վարդապետի

150-ամյակներին: Պլեները համախմբեց 18-30 տարեկան 45 երիտասարդ արվեստագետների՝
ՀՀ ողջ տարածքից, ԼՂՀ-ից, Վրաստանի Հանրապետության Ջավախք շրջանից:

2020 թվականի սեպտեմբերի 18-21-ը ՀՀ Շիրակի մարզում կանցկացվի «Մինասի
գույներով» երիտասարդ նկարիչների միջազգային 9-րդ պլեները: Այն կնվիրվի Մինաս
Ավետիսյանի 92-ամյակին: Պլեները կհամախմբի 18-30 տարեկան 45 երիտասարդ
արվեստագետների՝ ՀՀ ողջ տարածքից և ԼՂՀ-ից: